5557

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 132 - 25

Նախաձեռնող՝ ***«ԲԻԳՍՏՕՆ» ՍՊԸ***
ք. Երևան, Բաղրամյան փողոց, 31/2

Գործունեությունը՝ ***Աբովյան համայնքի Արամուսի բազալտների հանքավայրի «ԲԻԳՍՏՕՆ» տեղամասի երկրաբանական ուսումնասիրություն***
Կոտայքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 132 - 25

«19» Դեկտեմբեր **2025թ.**

Արամուսի բազալտների հանքավայրի «ԲԻԳՍՏՕՆ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԲԻԳՍՏՕՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն,
Կատեգորիա	Բ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Արամուս բնակավայր

Ներածական մաս. «ԲԻԳՍՏՕՆ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է Կոտայքի մարզի Արամուսի «Բիգստօն» տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Գործունեության նպատակն է որոշել օգտակար հանածոյի (բազալտ) հզորությունը, որակական հատկությունները և պիտանելիությունը երեսպատման և շինարարական քարի արտադրության համար:

Նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հայցվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքի սահմաններում: Ներկայացված է պետական, համայնքային և քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերով (գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական), ընդհանուր տարածքը կազմում է 2,8 հա: Տեղամասը գտնվում է Արամուս գյուղից 430 մ հարավ-արևելք, Կամարիս գյուղից՝ 500 մ հեռավորության վրա, Արամուս-Զովք հողածածկ ավտոճանապարհի հարևանությամբ: Տեղամասից մոտ 350 մ հեռավորության վրա գտնվում է տնկարան: Տեղամասը հողածածկ և ասֆալտապատ ավտոճանապարհներով կապված է հարակից գյուղերի, Աբովյան և Երևան քաղաքների հետ:

Արամուսի բազալտների հանքավայրի «ԲԻԳՍՏՕՆ» տեղամասի բազալտների հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին, տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում: Տեղամասի սահմաններում բազալտները ներկայացված են արտավիժված ապարների միասնական՝ մեկ լավային հոսքով, որի հզորությունը տատանվում է 5.3-14.2 մ սահմաններում՝ կազմելով միջինը՝ 8.12մ:

Ժամանակակից առաջացումներն առաջացնում են հարմատարած ծածկոց և ներկայացված են թույլ հողաբուսական շերտով ու դելյուվիալ նստվածքներով՝ կավերով և կավավազներով: Ընդհանուր հզորությունը տատանվում է 0.5մ-5.1 մ սահմաններում՝ կազմելով միջինը 1.92 մ:

«ԲԻԳՍՕՆ» տեղամասի տարածքը տեղակայված է 1550-1580մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասի սահմաններում տեկտոնական խախտումներ, սողանքային երևույթներ, փլուզումներ, քարանձավներ հայտնաբերված չեն:

Տարածքում կամ հարակից տարածքներում մակերևութային և գրունտային ջրերը բացակայում են: Ամենամոտ ջրային միավորը Գետառ գետն է, որը հոսում է երևակման տարածքից մոտ 2.7 կմ հեռավորության վրա:

Ուսումնասիրվող տեղամասում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը, բնության և պատմամշակութային հուշարձանները, հատուկ պահպանվող և ընդհանուր օգտագործման տարածքները: Համաձայն Հաշվետվության՝ հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում տեսակներ գրանցված չեն:

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°14'10.22" - հյուսիսային լայնության, 44°40'31.17" - արևելյան երկայնության:

Տեղամասի տարածքում նախկինում կատարվել են ոչ մեծ ծավալի արդյունահանման աշխատանքներ (բնակչության կողմից), սակայն հետախուզական փորվածքների չեն անցել, ձևավորված լցակույտերը կամ պահեստավորված հողաբուսաշերտը բացակայում է:

Երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու համար հայցվող տեղամասը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով՝ ըստ WGS-84 (ARMREF-02) համակարգի.

1.	Y=8472290.00	X=4455985.34
2.	Y=8472350.32	X=4455943.35
3.	Y=8472383.73	X=4455941.18
4.	Y=8472401.17	X=4455950.45
5.	Y=8472416.00	X=4455978.94
6.	Y=8472538.50	X=4455951.29
7.	Y=8472530.85	X=4455933.97
8.	Y=8472497.59	X=4455900.60
9.	Y=8472488.43	X=4455891.45
10.	Y=8472473.84	X=4455874.16
11.	Y=8472468.07	X=4455862.63
12.	Y=8472431.06	X=4455868.26
13.	Y=8472392.34	X=4455854.55
14.	Y=8472387.92	X=4455848.17
15.	Y=8472385.97	X=4455840.83
16.	Y=8472384.99	X=4455830.30
17.	Y=8472384.50	X=4455819.52
18.	Y=8472376.39	X=4455781.97
19.	Y=8472366.98	X=4455775.60
20.	Y=8472363.89	X=4455772.91
21.	Y=8472343.25	X=4455753.53
22.	Y=8472285.99	X=4455904.30
23.	Y=8472266.31	X=4455912.52

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատանցքերի և բացահանքի միջոցով, նմուշարկման զուգորդությամբ:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտներից երեսապատման բլոկների և սալերի ելքի տոկոսը պարզելու համար: Հետախուզումն իրականացվելու է հորատանցքերի միջոցով, ջրով, առանց կավային լուծույթի օգտագործման: Աշխատանքների ընթացքում չեն օգտագործվելու թունավոր նյութեր:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ մոտ 2.8 հա տարածքի վրա, հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով համապատասխան մասնագետների կողմից:

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 7 հորատանցք՝ 86 մ ընդհանուր ծավալով, երեք հետախուզական գծերի վրա: Հորատանցքերի խորությունը ընդունվում է 5-22 մ: Հորատումը կատարվելու է ՈՒԿԲ-1-VS հորատող հաստոցով, կարծր համաձուլվածքային թագիկներով, 132 մմ սկզբնական տրամագծով և 76 մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատհանուկի ելքը պետք է կազմի 85 %:

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտներից երեսապատման բլոկների և սալերի ելքի տոկոսը պարզելու համար: Նմուշարկումը կատարվելու է արդեն իսկ առկա փորձնական բացահանքից, որի ճակատի երկարությունը 50 մ է, մակերեսը 150 մ^2:

Երկրաբանակական փաստագրման աշխատանքները կատարվելու են 1:100 մասշտաբով: Ծավալներն են.

- հորատհանուկի փաստագրում - 86 գծ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում- 50 գծ.մ,

Ընդամենը – 136 գծ.մ:

Ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 19 նմուշ, այդ թվում 15 հանուկային և 4 մենաքարային նմուշ, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Բազալտների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 3 նմուշ՝ այդ թվում 2-ը հորատհանուկից, 1-ը փորձնական բացահանքից:

Նախատեսվում է կատարել նաև ապարակազմական /պետրոգրաֆիական/ հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 3 հղկուկ: Պետրոգրաֆիական ուսումնասիրությունները կկատարվեն ՀՀ ԳԱ երկրաբանական ինստիտուտում:

Փորձնական քարահանքից նախատեսվում է /20x20x20սմ/ չափի 2 մոնոլիտ նմուշների վերցնում:

Տեղամասի խիստ հողմահարված, ճեղքավորված բազալտների պիտանելիությունը, որպես խիճ և ավազ շինարարական աշխատանքների համար պարզելու համար, անհրաժեշտ է 2 համախառն նմուշ՝ յուրաքանչյուրը 150 կգ քաշով, ընդհանուրը՝ 300 կգ:

Վերցրած նմուշները կենթարկվեն ուսումնասիրությունների «Անալիտիկ» ՓԲ ընկերության լաբորատորիայում:

Կկառուցվի 7 հորատման հրապարակ՝ յուրաքանչյուրը 43 մ^2 մակերեսով: Ընդհանուր մակերեսը կկազմի՝7 x 43=301 մ^2: Ծավալը /հողի շերտի 0.7 մ տեղափոխման պայմաններում/ կկազմի 210.7 մ^3:

Նախատեսվում է կառուցել հորատման հրապարակներին մոտեցնող ճանապարհներ մոտ 500 մ երկարությամբ՝ 2.5 մ լայնությամբ և 0.7 մ խորությամբ: Իրականացվելու է նաև 1.0 կմ հանդամիջյան ճանապարհի նորոգում՝ 2.5 մ լայնությամբ և 0.35 մ խորությամբ:

Հորատման հարթակների կառուցման և փորձնական բացահանքի անցման ժամանակ նախատեսվում հանել հողի շերտը /0.7մ չափով լեռնային զանգված/, կուտակել այն անմիջապես փորվածքի և հարթակի հարևանությամբ, աշխատանքների ավարտից հետո հողաշերտն օգտագործել խախտված լանդշաֆտի վերականգնման նպատակով:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողի շերտի ծավալը հաշվարկվում է տարածքի մակերեսից և հողային շերտը վերականգնվում է 0.7 մ խորության վրա: Հետախուզական աշխատանքների ավարտից հետո, հորատման հարթակների կառուցման ժամանակ հանված հարթակների հարևանությամբ կուտակված հողաշերտն ամբողջ ծավալով օգտագործվելու է ռեկուլտիվացման աշխատանքների ժամանակ: Ռեկուլտիվացիայի ենթակա հողաշերտի ընդհանուր ծավալը հորոտահարթակների համար կազմում է. 301մ^2 x 65% x0.7 մ=137 մ^3:

Խախտված հողերի ընդհանուր մակերեսը հարթակների և փորձնական բացահանքի համար կկազմի՝ 301+150=451 մ^2: Ռեկուլտիվացիայի գումարը 1մ^2 մակերեսի համար կկազմի 1.7353 հազ.դրամ, վերականգման ենթակա ընդհանուր՝ 451 մ^2 մակերեսի համար գումարը կկազմի 451.0 մ^2 x 1,7947դր = 809,41 հազ.դրամ:

Ռեկուլտիվացիոն աշխատանքներն իրականացվելու են հետախուզական աշխատանքներին մասնակցող անձնակազմի և տեխնիկայի ուժերով: Ռեկուլտիվացված տարածքներում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք՝ կենսաբանական ռեկուլտիվացիա: Աշխատանքների իրականացման համար նախատեսված ծախսերը ընդհանուր կկազմեն 827 450 ՀՀ դրամ:

Ճանապարհների ռեկուլտիվացիա չի նախատեսվում, քանի որ վերջիններս օգտագործվելու են հետագայում արդյունահանման աշխատանքների համար կամ կօգտագործվեն բնակիչների կողմից որպես դաշտամիջյան ճանապարհներ:

Երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների դաշտային փուլը տևելու է 1-2 ամիս: Այս ժամանակահատվածում փոշեառաջացման օջախների ջրցանման համար անհրաժեշտ 10 տ ջրաքանակը կբերվի ջրցան մեքենայով՝ պայմանագրային հիմունքներով, կամ կգնվի ջրամատակարար կազմակերպությունից: Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջուրը տեղամաս կբերվի մոտակա՝ Արամուս կամ Կամարիս բնակավայրերի ջրամատակարարման ցանցերից կամ առևտրի կետերից՝ տարրաներով:

Հայցվող հանքերևակման տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ: Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքային հորիզոնները ջրարբի դարձնող հիմնական ջրատար հորիզոնները, ուսումնասիրել ջրի որակը, կատարել ռեժիմային դիտարկումներ: Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Աշխատանքների ժամանակ առաջացող թափոնները (բանեցված քսայուղեր, նավթամթերքի մնացորդներ, հորատման թագիկներ, կենցաղային թափոններ, մակաբացման ժամանակ հեռացվող հողաբուսական շերտ) հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և սահմանված կարգով հեռացվելու են աղբահավաք կետեր:

Տեղամասում տեղադրվելու է բեռնարկղային տիպի տնակ, որտեղ կկազմակերպվի աշխատակիցների հանգիստը և սննդի ընդունման համար անհրաժեշտ պայմանները: Նախատեսված է տեղամասում դաշտային տիպի լվացարան և աշխատողների տնտեսակենցաղային կեղտաջրերի հեռացման ժամանակավոր տարողություն:

Հաշվետվությունում ներկայացվել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, կենսաբազմազանություն) և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և մշակվել են միջոցառումների ծրագիր՝ հնարավոր վնասակար ազդեցությունները կանխարգելելու, նվազեցնելու և փոխհատուցելու

նպատակով: Նախատեսվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմանն ուղղված մշտադիտարկումներ, թափոնների կառավարմանն ուղղված միջոցառումներ՝ իրականացման ծախսերով:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներով: Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Աբովյանի համայնքապետարանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել հորատանցքերի և փորձնական բացահանքի միջոցով: Հետախուզման ընտրված եղանակը բնապահպանական տեսակետից շրջակա միջավայրի վրա կունենա աննշան ազդեցություն: Հետախուզական աշխատանքները իրականացվելու են ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության ոլորտը կարգավորող պահանջներով:

Գնահատման և փորձաքննության փուլերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Աբովյան համայնքի Արամուս բնակավայրում իրականացվել է 2 (երկու) հանրային լսում: Նախատեսվող գործունեության իրականացումը հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
- Ապահովել մշտադիտարկումների իրականացումը՝ «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման համաձայն:
- Մշտադիտարկման արդյունքներով պայմանավորված՝ գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում կենդանատեսակների՝ մասնավորապես «Երկարատ սցինկ» մողեսների կարգին պատկանող խոցելի տեսակի հայտնաբերման դեպքում, ձեռնարկել պահպանության միջոցառումներ:
- Ապահովել Հաշվետվությամբ ամրագրված լանդշաֆտային ամբողջականության՝ խախտված տարածքների վերականգնման աշխատանքների իրականացումը:
- Առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող իրավասու մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲԻԳՍՏՕՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «ԲԻԳՍՏՕՆ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունով ներկայացված նախատեսվող գործունեությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ եզրակացությամբ ամրագրված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան